ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

« 19 » մարտի 2024թ.
ք. Եղեգնաձոր

ՀՐԱՄԱՆ N 77

ԱՐԵԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎՈՒՄ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 24-րդ հոդվածով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվը վարելու, կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգը սահմանելու մասին» 1520-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-15-րդ, 18-րդ, 20-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարողի 2024 թվականի մարտի 18-ի N74 հրամանը և Արեգ Մարտիրոսյանի դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. 2024 թվականի մարտի 19-ից մինչև սեպտեմբերի 19-ը Արեգ Մարտիրոսյանին գրանցել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում:
2. Հաշվապահին՝ վճարումը կատարել օրենքով սահմանված կարգով:
3. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂ

Ս. ԴԱՎԹՅԱՆ